ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«04» դեկտեմբերի 2018 թվականի № 168-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2014 թվականի հունիսի 25-ի թիվ 81-Ա հրամանը և հիմք ընդունելով «ՉՈՐՍ ՎԱՍԱԼ» ՍՊ ընկերության թույլ տրված խախտումների հիմքով ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ընդերքի գործակալության պետի պաշտոնակատարի թիվ 05/12123-18 միջնորդագիրը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հարուցել վարչական վարույթ «ՉՈՐՍ ՎԱՍԱԼ» ՍՊ ընկերության թույլ տված խախտման հիմքով:
2. Վարչական վարույթ իրականացնող մշտական հանձնաժողովին՝
1) վարչական վարույթ իրականացնող մշտական հանձնաժողովի անդամներին և վարույթի մասնակիցներին ծանուցել վարչական վարույթի հարուցման, անցկացման տեղի, օրվա, ժամի և այլ պայմանների մասին.
2) վարչական վարույթի արդյունքում Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին ներկայացնել համապատասխան վարչական ակտ ընդունելու վերաբերյալ հիմնավոր առաջարկություն՝ ներկայացնելով նաև վարչական ակտի նախագիծը:
3. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Վարդան Գևորգյանին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ**

12/4/2018

X

VERIFIED OCSP 04-Dec-18 11:26:11 GMT+4

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118